ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2766 - Ա **16 ապրիլի 2009թ.**

ԳԱԳԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ Հ. 68/56 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՅՈՒԴՎԻԿ ՏԻԳՐԱՆԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ, ՌՈԶԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ, ԼԱՐԻՍԱ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԱԶԻԶԲԵԼՅԱՆԻ, ԱՐՍԵՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՕԲԻԿԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լյուդվիկ Տիգրանի Ազիզբեկյանի (ծնված 30.12.1940թ.), Ռոզա Համբարձումի Ազիզբեկյանի (ծնված 02.02.1940թ.), Լարիսա Լյուդվիկի Ազիզբեկյանի (ծնված 29.05.1964թ.), Արմեն Լյուդվիկի Ազիզբելյանի (ծնված 15.08.1970թ.), Արսեն Լյուդվիկի Ազիզբեկյանի (ծնված 21.04.1973թ.), Գայանե Լյուդվիկի Ազիզբեկյանի (ծնված 16.01.1980թ.), Նարինե Օբիկի Ազիզբեկյանի (ծնված 22.02.1972թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Գագարինի փողոցի հ.68/56 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 126.51քմ, որից 102քմ մակերեսով հողամասն Երևանի քաղաքապետի 26.02.1999թ. հ.198 որոշմամբ Լյուդվիկ Տիգրանի Ազիզբեկյանին, Ռոզա Համբարձումի Ազիզբեկյանին, Լարիսա Լյուդվիկի Ազիզբեկյանին, Արմեն Լյուդվիկի Ազիզբելյանին, Արսեն Լյուդվիկի Ազիզբեկյանին, Գայանե Լյուդվիկի Ազիզբեկյանին, Նարինե Օբիկի Ազիզբեկյանին տնօրինման և օգտագործման թողնված հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 24.51քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 20.10.2008թ. հ.109, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/142 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.03.2009թ. հ.20-Ել-1699 եզրակացությունը, համաձայն որի Գագարինի փողոցի հ.68/56 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի

համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Գագարինի փողոցի հ.68/56 հասցեում Լյուդվիկ Տիգրանի Ազիզբեկյանի, Ռոզա Համբարձումի Ազիզբեկյանի, Լարիսա Լյուդվիկի Ազիզբեկյանի, Արմեն Լյուդվիկի Ազիզբեյանի, Արսեն Լյուդվիկի Ազիզբեկյանի, Գայանե Լյուդվիկի Ազիզբեկյանի, Նարինե Օբիկի Ազիզբեկյանի սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 102քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 24.51քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 126.51քմ մակերեսով հողամասի և 24.51քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Գագարինի փողոցի հ.68/56 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Գագարինի փողոցի հ.68/56 տուն>>։

5.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Լյուդվիկ Տիգրանի Ազիզբեկյանի, Ռոզա Համբարձումի Ազիզբեկյանի, Լարիսա Լյուդվիկի Ազիզբեկյանի, Արմեն Լյուդվիկի Ազիզբեյանի, Արսեն Լյուդվիկի Ազիզբեկյանի, Գայանե Լյուդվիկի Ազիզբեկյանի, Նարինե Օբիկի Ազիզբեկյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա–Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ